ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 185 - Ա
22 հոկտեմբերի 2013 թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Գոհար Դալլաքյանին հատկացնել 50.000 /հիսուն հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով տասնօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2013 թ. հոկտեմբերի 22 - ի
N 185 - Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂԻ

հ/հ	ազգանուն, անուն	հասցե	հատկացված գումարի չափը դրամով	ծանոթություն
1.	Դալլաքյան Գոհար	ք. Ճամբարակ	50.000 /հիսուն հազար/	բնակարանում բռնկված հրդեհի հետևանքով կրած վնասի ծախսերը մասնակի հոգալու համար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԱՂԵԿՅԱՆ